Հավելված 1
Հաստատված է
«Այդի Բանկ» ՓԲԸ վարչության
2026թ. հունիսի 18-ի N 244- Լ որոշմամբ
Գործում է սկսած 2026 թվականի հունիսի 22–ից

«Միջազգային շոփինգ և idcoin-եր» արշավի իրականացման պայմաններ

1. Պայմանների կիրառման շրջանակը և պայմանների ընդունումը

1.1 Սույն պայմանները կիրառելի են բացառապես ֆիզիկական անձ քարտապանների նկատմամբ:

1.2 Արշավին մասնակցելու դեպքում Քարտապանն անվերապահորեն ընդունում է սույն պայմանները, որոնք համարվում են վերջնական:

2. Հիմնական հասկացություններ

2.1 **Բանկ՝** «Այդի Բանկ» ՓԲԸ,
2.2 **Արշավ՝** Բանկի կողմից 22.06.2026թ-ից 21.09.2026թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
2.3 **Քարտ՝** Բանկի կողմից նախքան սույն Արշավը և Արշավի ընթացքում ֆիզիկական անձանց համար թողարկված Visa տեսակի բոլոր քարտեր: Visa բիզնես տեսակի քարտերը չեն մասնակցում Արշավին:
2.4 **Կից Քարտ՝** հիմնական Քարտին կից Visa տեսակի քարտ:
2.5 **Քարտապան՝** արդեն գործող կամ Արշավի շրջանակում թողարկված Visa տեսակի Քարտի ֆիզիկական անձ քարտատեր:
2.6 idcoin՝ հավատարմության թվային միավոր, որը կուտակվում է Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում: Այն հնարավոր է օգտագործել Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում QR վճարում կատարելու միջոցով:
2.7 **Միջազգային վճարային գործարք՝** ստորև ներկայացված խանութներում ՀՀ տարածքից դուրս իրականացվող, ինչպես նաև դրանց առցանց հարթակների միջոցով կատարվող վճարումներ:

3. Արշավի պայմաններ

3.1 Արշավի շրջանակում՝ 22.06.2026թ-ից 21.09.2026թ-ը ներառյալ, ինչպես գործող, այնպես էլ նոր պատվիրված Visa տեսակի Քարտերով 3.2 կետով սահմանված խանութներից Միջազգային վճարային գործարքներ կատարելիս, Քարտապանները կստանան մինչև 20% idcoin (հարկումից հետո):
3.2 Սույն Արշավի շրջանակում idcoin-ը հաշվարկվում և Քարտապաններին է վճարվում հետևյալ խանութներում կատարված Միջազգային վճարային գործարքների դիմաց.

- Zara
- Massimo Dutti
- Nike

- Puma
- Adidas
- Farfetch
- GOAT
- Zalando / Lounge by Zalando
- Foot Locker
- JD Sports
- Mango
- Shein
- H&M
- Next

3.3 Արշավին մասնակից որևէ անձ չի կարող 22.06.2026թ-ից 21.09.2026թ-ը ներառյալ, որևէ օրացուցային ամսվա համար 3.2 կետով նշված խանութներից իր կատարած Միջազգային վճարային գործարքների համար ակնկալել կամ ստանալ հանրագումարային 10 000 idcoin-ից ավել idcoin՝ անկախ Քարտերի քանակից: Արշավի ընթացքում վճարման ենթակա idcoin-երի առավելագույն սահմանաչափից ավել idcoin կամ որևէ այլ տեսակի հատուցում Արշավի ավարտից հետո ևս ենթակա չէ վճարման:

3.4 Idcoin-երը տրամադրվում են հիմնական Քարտապանին, իսկ Կից Քարտերով կատարված Միջազգային վճարային գործարքները գումարվում են հիմնական Քարտով կատարված Միջազգային վճարային գործարքներին:

3.5 Արշավի շրջանակում idcoin տրամադրվում է միայն դրանց տրամադրման պահին գործող Քարտերով կատարված գործարքների դիմաց: Եթե idcoin-ի տրամադրման պահին Քարտը փակված է, ապա տվյալ Քարտով կատարված գործարքների դիմաց idcoin չի հաշվարկվում և տրամադրվում:

3.6 Տվյալ ամսվա ընթացքում Միջազգային վճարային գործարքի համար idcoin-ի վճարումը կատարվում է հաջորդ ամսվա մինչև 10-րդ աշխատանքային օրը:

3.7 Գնման վերադարձի դեպքում այդ գործարքը idcoin-երի տրամադրման հաշվարկի մեջ չի ներառվում:

3.8 idcoin-ի տրամադրման և սպասարկման կանոնները տեղադրված են հետևյալ հղմամբ՝ https://idbank.am/upload/iblock/51c/14i130b2nrcrqh52uxfqtkoqi1j347j6/0440_VSH_idcoin_TC_200225.pdf

3.9 Փաստացի ստացման ենթակա idcoin-ը Քարտապանին տրամադրվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված եկամտային հարկի և այլ պարտադիր վճարների գանձումից հետո, եթե այդպիսիք լինեն: Պետությանը վճարման ենթակա բոլոր անհրաժեշտ հարկերը վճարվում են Բանկի հաշվին և կողմից:

3.10 Քարտապանների՝ Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

3.11 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում Բանկի պաշտոնական կայքում դրանց հրապարակման պահից և տարածվում են հրապարակման պահից հետո կատարված վճարումների վրա: